Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Գառնի բանավանի հիմնական դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

1. Հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
   1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
   2) Բարձրագույն կրթությունը,
   3) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթի մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
   1) Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
   2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,
   3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
   4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ),
   5)Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում),
   6) Աշխատանքային գրքույկի պատճենը,
   7) Զինվորական գրքույկի պատճենը:

   Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

3. Փաստաթղթերն ընդունվում են Գառնի բանավանի հիմնական դպրոցում, 2018թ. հուլիսի 24-ից մինչև օգոստոսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից :

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2018 թվականի օգոստոսի 22-ը ,մինչև ժամը 16:00-ն: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2018թ. օգոստոսի 31-ին, ժամը 13:00-ին,** Գառնի բանավանի հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ.Գառնի, բանավան, <<Գրիգոր Գուրզադյան >> թաղամաս, Դավիթ Արտուշյան փողոց: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ /091/ 76-05-49: